

ՀՏԴ 809.198.1

Ոճագիտություն

## ՊԱՏՄԱԿԱՆ ՈՃԱՎՈՐՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ» ՊՈԵՄՈՒՄ

### Ծուշանիկ ՄԱՂՅԱՆ

**Բանալի բառեր՝** բառային միջավայր, բառի անվանողական դեր, ժամանակավիպություն, խորհրդանիշ, հնարք, շրջատույթ, պատկերափորման միջոց, պատմաբառ, պատմական ոճավորում

**Ключевые слова-** архаизм, изобразительные средства, историзм, историческая стилизация, окказионализм, перифраз, символ, тенденциозный анахронизм, языковая среда

**Keywords-** anachronism, archaism, function of word, historism, trope, historical stylization, paraphrase, symbol

### III. Հայություն

#### Историческая стилизация в поэме Ованеса Шираза «Тондракецинеры»

В статье исследована историческая стилизация в однои из больших романов Ованеса Шираза «Тондракецинеры». Как известно, исторические романы Ованеса Шираза своеобразны с точки зрения восприятия философии истории и его стилизации. В статье исследованы способы употребления иссторизмов и архаизмов, а также ряд слов, связанных с Западной Арменией в поэме «Тондракецинеры». Историзмы употреблены умеренно, преобладает индивидуальное применение. Заметен тенденциозный анахронизм. Архаизмы соответствуют классическим методам исторической стилизации.

#### Sh. Saghyan

#### Historical stylization in the poem of Hovannes Shiraz «Tondraketsinerry»

The article deals with historical stylization in the biggest historical poems of Hovannes Shiraz «Tondraketsinerry». In general, the historical poems of Hovannes Shiraz are original by phylosophy of history and its stylization. The article deals with historisms (they have nominal and aesthetic functions), archaisms (they are used according to classical methods), some words relating to Western Armenia and some means of their usge. It is distinguished tendentious anachronism.

Հոդվածում քննվել է Հովհ. Շիրազի պատմական ծավալուն պիեսներից մեկի՝ «Թոնդրակեցիները» երկի պատմական ոճավորումը: Նրա յուրահատկությունը պայմանավորված է թե լեզվական նյութի առանձնահատկությամբ, թե պատմականության հեղինակային ընկալմամբ: Հնարքանությունների անվանողական գործառույթին զուգահեռ բնդգծում է զեղագիտական գործառույթը, որով պահովվել է իհմնագաղափարի՝ միջին դարերից պատմական հայրենիքի աստիճանական կորստի հիմք դարձած բարդ նախադրյալների վերհանումը: Լեզվական հնարքների միջոցով (բնդգծած են նոյնահիմքությունը, միտումնավոր ժամանակավիպությունը) հանճարեղ գրողը ստեղծել է համակողմանի ուսումնասիրության արժանի համակարգ:

XXդ. հայ զեղարվեստը զարգացրել է պատմական թեմատիկան ենթաժանրային ու զաղափարական առումներով: Ընդհանուր առմամբ պահպանվում էր այն ճշմարտությունը, որ «Ներկա իրադարձությունները մշտապես ստուգվում են անցյալի փորձով, հետևաբար պատմությունը ոչ միայն անցյալի հայելին է, այլև ներկայի խորհրդատուն, որ ուսուցանում է ապագա սերնդին զգուշանալ «նախահարց սխալներից և հետևել նրանց լավ գործների օրինակին»:<sup>1</sup> Հայ մտավորականներն անընդհատորեն անդրադարձել են հայոց պատմության ուշագրավ անցրելին, դրանք զեղարվեստորեն մատուցել՝ անցյալի և ներկայի միջև անխօնելի կապն ապահովելու ազգապահպան նկատառումներով: Այս դաշտում Հովհ. Շիրազի պատմական պիեսները ևս, տաղանդավոր գրողի արվեստի նման, ինքնատիպ են՝ թե լեզվական նյութի, թե պատմականության ընկալման տեսակներից: «Շիրազը սերունդների համար պատմությունից վերցրել է կրակը՝ մոխրը թռղնելով անցյալին», - գրել է Ս. Մուրադյանը «Թոնդրակեցիները» պոեմի ներածականում<sup>2</sup>:

Ինչպես հայտնի է, Շիրազն իր ժամանակաշրջանի ազգային ու բարյական խնդիրներին անդրադարձել է անընդհատորեն. դրանցից մեծագույնը եղերականորեն կորսված հայրենիքի զաղափարն էր, նրա վերիշշեցումը: «Թոնդրակեցիները» պիեսում արտացոլվել է համամարդկային ու ազգային խնդիրների հերթական բախումը IXդ.: Հանճարեղ գրողը նորից ազգայինին նախապատկություն տալու անթարույց վերաբերմունքն է ի ցույց դրել, ներկայի ու անցյալի զուգադրյամբ ածանցել այն ճշմարտությունը, որ ազգերի բարեկեցությունից է ի վերջո ձևավորվում

<sup>1</sup> Սարինյան Ս., Հայոց գրականության ներկու դարը, Եր., 2004, էջ 446:

<sup>2</sup> Շիրազ Հովհ., Թոնդրակեցիները, Եր., 2014, էջ 18:

համամարդկային բարեկեցությունը։ Այն լեզվական նյութը, որով հեղինակը կառուցել է պոեմը նույնպես ինքնատիպ է։

Ծիրազը նորից պատմությունն ուղղակի չի արձանագրել. պատմական միջավայրի նկարագրությունը նույնպես ստորադասել է հիմնագաղափարին՝ այն բարդ նախադրյալների վերլուծությանը, որոնք պատմական հայրենիքի աստիճանական կորստի հիմքն են դարձել: Պատահական չե, որ պոեմի նախնականքում հանդիպում են՝ Եղեռն, բանտված լեռներ (36), կարոտի կանչ (37) լճագական միավորները: Կամ՝ պատմական տարրեր վիճակների զուգադրություն կա՝ Այնունա, ուր Վանա ծովին էր ծիծառում Զիւրջ քրոջ պես հպարտ լեռների, Ուր այժմ վիշտը ծիծաղն է թաղում, Լեռներն են նման կապկած ծնոների (36): Ծիրազը հաճախ էր այսօնն վերացարկում այն կենսամիջավայրից, որում այն առկայացել է: Սրանցից էլ բլուում է պատմական ոճավորման ուրույն համակարգ, որին կանդրադառնանք սույն հոդվածում:

Հայունի է, որ պատմական երկի դեպքերը նախ և առաջ ծավալվում են որշակի ժամանակաշրջանի հարթակում, և երկի լնգվական համակարգ են ներառվում համապատասխան վարչադարձական, մշակութային կացութածն, կենցաղավարություն արտացոլող բառն: Դրանց թեմատիկ ընդգրկվածությունն ու հաճախականությունը տարբեր է ըստ ստեղծագործողների: Շիրազի քննող պոնմում պատմաբառերի յուրահատկությունը մի մասով պայմանավորված է նրանով, որ հեղինակի բնութագրմամբ՝ երկր պատմափիլիստիկական է<sup>1</sup>:

Մեր արձանագրած վարչական, կառավարման, ուսումի և այլ ոլորտների պատմաբառերը մասամբ են՝ անվանողական գործառույթով հանդես գալիս: Դրանցից են՝ աղվեսադրոշմ (77), արքա (52), քերդ (112), թագ (50), թագավոր (68), թուր (126), իշխան (103), ծաղկող (63), ծորտ (126), մազաղաթ (63), նախարար (126), սպարապետ (96), սելջուկ (56) և այլն: Միակ պատմական մակդիրը մեծաթագ-ն է՝ ուղղված թագավորին (101): Սրանք նպաստում են թե պատմական, թե խոսքային միջավայրի կերտմանը. –Ի նշ բանադրանք, երբ կա իմ նետը (201): Ազատությունը... արքայի գլուխ զլիսատող սակրին, ոչ ստրկուհուն (126): Ասրոցով, դյոյակով իրենց Եկան ծննդան իմ պարզ համայնքին (210) և այլն: Նշշանակագիր ավելի ու ցայտուն է պատմաբառերի գեղագիտական գործառույթը, որին կանորադարձանք թիւ ներքում:

Պետմի պատմական անձնանունների մի մասն առնչվում է կերպարներին: Դրանք քննվող ժամանակաշրջանի հայտնի պատմական անձինք են՝ *Ամբատ Բագրատունի*, Հուսիկ Աղավնունի, *Վահրամ Պահլավունի*, Գրիգոր Մազհատրոս, *Ամբատ Զարեհավանցի*, Թորակ Թոնդրակեցի : Նշվածների ժամանակակից օտարներից կան Արլ-Բարք, Ավիշին (54) անունները: Շիրազն ընթերցողին նաև բացահայտել է նրանց պատմական դերակատարությունը կամ ընկալումը. «*Ձեզ կծննեմ Արլ-Բարքին, Դմոն վիշապ ժանտ արաբին... Ձեզ կուզե դահիճն հայոց... Ձեզ է խալիքն ինձնից ինդրում*» (228): Պատմական կերպարները կենսամիջավայրում առկայացած են այնքանով, որքանով դա պետք է զաղափարական հիմքն ապահովելու համար: Շիրազը պատմական միջավայրն ընդամենը ուրվագծել է: Կերպարների արտաքինը չի պատկերվել. հեղինակը հմտորեն հյուսն է ներքին հոգնվիճակի նկարագրությունը: Ներկայանում է Ս. Մուրադյանի պատկերավորքնութագրմամբ՝ «կերպավորված հերոսների հոգներանության բացահայտման բացառիկ ձիրքը»<sup>2</sup>: Տաճք արքայի՝ Ամբատ Բագրատունու շիրազյան նկարագիրը, որ արտաքին կերպավորում ներկայացնող միակ հատվածն է պոեմում, նաև նկատելի է հեղինակի անթաքոյց դրական վերաբերմունքը հայ արքայի նկատմամբ. Ասեն աստված լիներ արքան, Հայոց թագով յոթնաժանիր, Ծրախմբով իր փառանպարտ, Իր թիկնապահ զինախմբով, Ձնն ու զարդով իր քաջազարդ, Ուկու մեջ էլ վշտի ամպով: Շիրանիով արյունատոյզ (47): Ի դեպ, Շիրազը խոսրի հոգականությունը պահպանել է իշխանական կացութաձևի նկարագրություններում՝ թագավոր ունեցած ներքնմանի մեծ հայատանի պատմական կարոտի ներանգ հաղորդելով ստեղծագործությանը. Արևը՝ հազած ոսկեղեն զրահ, Գլխին՝ թագն հայոց մեր թագվորի, Արքայակայել եղավ ու բազմեց Անիի վրա, Յրելով մութը մեր սար ու ձորի: Ուկի շատ տվեց վեր՝ Արագածի արծաթե ձյունին, Եվ Ալսույրանին ողջունեց ձորում, Երբ միջնաբերդից լուրս նկան արքան և Աղավնունին՝ Դնու չկայծակող ամպիկն աշքերում, Նախարարներով և իշխաններով Եվ սպատազեն թիկնապահներով մայր տաճար մտան (268): Գլխավոր կերպարներից Ամբատ Զարեհավանցու նկարագիրը հակասական է՝ կատուղած հակադրույթի միավորներով. Հոգու մեջ կանթեղ, հազինը՝ խավար: Հոգում հոյս ու զահ, Հազին՝ ֆարաջա (43): Գրիգոր Մազհատրոսի նկատմամբ Շիրազի ակնհայտ բացահական վերաբերմունքն արտազովել է Ամբատ Զարեհավանցու խորութ. «Դու բեզմէ խոսն՝ ի՞նչ ես իրուել, Որ բյուզանդն է

1 U.U., §9 8:

<sup>2</sup> ע.ע., ח' 26:

<sup>3</sup> Կարծում ենք՝ Շիրազն այս բարդ գործածելի է լայն հազուստ իմաստով:

թեզ մազիստրոսել... Բյուզանդը, ոչ թե մեր հայոց արքան: Ինչու՞ է շոյում թեզ օստարն այնքան, Որ երազում է Անի ներխուժել՝ Բյուզանդը, որ դեռ փորք ազգերին Տենչում է ձուլող իր ծոցը քաշել.... Թեզ նման ուղին Բյուզանդն է ձուլել, Որ անմեղիս են եղջուրահարում, հոյն զորքով չէի՞ր հայ թերդն ավելում(112):

Շիրազի մատահայնցողությամբ՝ պատմական կերպարը ներկայանում է իր գործունեության և դրա հետագա արդյունքի միասնությամբ: Ծեկուզ այս երկուսի սահմանագիծը հազարամյակ լինի: Պատմական հայտնի կերպարները կարող են դրական կամ բացասական արժեքությունների չափանիշներ լինել, հեղինակի կամ կերպարների կողմից հիշատակվել՝ պատմության կապը, որ միշտ կա տաղանդավոր զրողի երկնորում: Օրինակ՝ Վարդան Մամիկոնյանի (161) կամ Վասակ Սյունու (158) անուններն այլաբերաբար դրական կամ բացասական իմաստավորումներով են հանդես ենկել, կաթողիկոսի կողմից Ներսէս Մեծի հիշատակումը նպաստել է համապատասխան խորային միջավայր ստեղծելուն. Ներսէս Մեծից ետ ու այսօր՝ խեղճ են հայոց վանքերն անզոր (64): Կամ՝ Պապ թագավորի հականեղինցական դիրքորոշման հիշատակումը Սմբատ Զարեհավանցու կողմից. -Պապ թագավորն իրավն ասավ, Վանքի հացից մեզ սով հասավ (59): Հեղինակի մերժողական վերաբերմունքի արտահայտություն է Բեղլի անվան հիշատակումը թոնդրակների նկատմամբ. -Մենք ծեզուրաց ենք, -կրկնեց Հարելը, Ինչպես հայկելնդդեմ աղեղված Բեղլը (76):

Պոեմում պատմական տեղանունների ճուս համակարգ է արձանագրվել: Ընդհանրապես, Շիրազի պատմական երկերի պյութենները ծավալվում են պատմական հայաստանի այն տարածքներում, որոնց հայկական կենսամիջավայրն ի վերջո կորսվել է: Այսպես է նաև քննվող պոեմում: Հեղինակը պատմական տեղանքն աշխարհագրական, ուղինեֆային նկարագրություններով չի տվել: Պատմանունների մի մասը ծառայում է պատմական դեպքերի արձանագրմանը. Եվ ճիշտ այն ժամկե, երբ յութել Դվին՝ Խշլուս է արաք զորքը տակավին: Կամ՝ Այս տարածամին ի՞նչ թոնդրականալ, Երբ կուգեն Անվո դրներն էլ բանալ, Երբ սելջուկ զորքն է իմ վրա զալիս: Նշված միավորների մեծ մասը ներկայանում է իբրև այս կամ այն ազգային խնդրի տեղայնացման արտահայտություն, օրինակ՝ Տարոնն էլ ձի է Բյուզանդին դառնել, հեծյալն իր աչքը Անի է հառել (90): Կամ՝ թոնդրակացած զավաններում այումն չի ծավալվում: Դրանց անունները 109-րդ, 111-րդ և այլ էջերում նշվում են իբրև IXդ. ազգային խնդրահարույց իրողություններ, օրինակ՝ Այսպես էր ողջը դաստիքը արքա, Այսպես էր Մոլզը և Մանանտին, Զարեհավանը, Վանը, Հաշոյյանը... Ուր պաշտվեցավ այս պիոդ հեշտանքը : Կամ՝ վանքապատկան տեղանունները հականեղինցական խորում են գործածվում. Քանզի ինչպես Անին ուստան, Հազար վանք է՝ մեկ հայաստան: Բայց կա՞ անհող հայ վանք մի ճուս, Որ չի լսել հանքն իմ հացի: Կա՞ մի վանքյան եկեղեցի, Մայր Անիի մի տաճար, Վանա ծովի մի Ակսամար, Մի Սասունա Սուրբ կարապետ, Լուս մի մատոյս Սպասավանք.... Մի Խաչավեն, մի Գլակա, Որ չի զավեճ իր շրջակա Գյուղաց հողերն իբր Մոտկան՝ դարձնելով վանքապատկան (58-59):

Տեղանունների խտացումներ կան արքայի խորում. Վերջինս պոեմում հայաստանի աշխարհիկ հզորությամբ մտահոգվող անձ է խորհրդանշում: Այսպես առանձնանում են էջեր (72, 85, 90, 91), որոնք ի վերջո տաղանդավոր բանատեղի հավերժախոս աղաղակումներն էին հայոց կորուստների համբեաց. Գահի թողեց առանց հեղ-տան՝ Առանց Արարու, Առանց Գողթան, - Առանց տան-պուն՝ առանց Մասիս, Առանց Սասուն, Առանց Տիգրիս, Առանց Խաթթ, առանց Խարբերդ, Առանց Եփրատ, անարտամենք, Առանց Մոկսի, Առանց Սիփան, Առանց Ղարսի, առանց Սիփան, Առանց Տարոն, առանց Անի, Առանց Լարն, առանց Վանի, Առանց Դվին, Էլ ի՞նչ արքա առանց մայր հող: Վատիող սիրտս՝ առանց հովի, Ավադ, առանց Վանա ծովի, Առանց Բինգոյլ ու Բյուրական, Ավադ, առանց Վասպուրական Էլ ո՞րն ասեմ Առանց Մասիս՝ Ինչպես կիսեմ Յավերն ազգիս.... (90- 91): Այսպես իբրև խորհրդանշներ են հանդես գալիս նաև Փոքր Հայր անունը, որ քնամենը ծառայում է հունացող տարածքի վատանգ նշնուի համար, Բյուզանդիան՝ ուժագնող քաղաքականություն վարող կայսրություն, երբեմնի Արշակունյան՝ հասարակական կացության արտաստիքը միջավայր է նշանակում: Իսկ պատմական որոշ անուններ «Թոնդրակնեղիները» պոեմում ևս, ինչպես հեղինակի ողջ չափածոյնում, ներկայանում են իբրև խորհրդանշներ, օրինակ՝ Անի, Վան անունները քննվող պոեմում ևս կորուսավագ հայրենիքի հզոր խորհրդանշներն են՝ Գոյց ճամփենքը Անիից մինչ Վան Զան մեջ էլ պիտի զորքերի առջև կանաչ զորքին (245): Որ վաղը Վանն էլ կամքեն քո ծին (234): Միայն Անին չէ, Վանն էլ կկանչե, Զորք է երազում հոյսն հայրենիքի (134): Մասիս բառն ընդգծվում է սովորության ուժով. այն պատմական կերպարների խորում ևս ազգային վերաբերմունքի չափանիշ է: Ի վերջո, պատմական հայաստանի զաղափարը Շիրազն ամփոփել է մեկ բառի մեջ՝ մայրահող (134), որ առավել խտացված է ներկայացնում նրա պատմական կարուտը:

Նշվածին զուգահեն, Շիրազի վարպետ զրչով պատմաբարենքն այլաբերվել են գեղարվեստին հասուկ օրենքներով: Ընդհանրապես, XXդ. պատմական գեղարվեստն առանձնացել է նաև

պատմաբառերի անհատական կիրառության լայն հնարավորություններով. մտրի ազատությունը զգալի է նաև այս ոլորտում: Այսպես է նաև զեղարվենատր տարբերվում պատմագրությունից. Բա՞վ չէ ճորտանա ճոյն կինը՝ մեկին (109): *Ոչ ստրկանս կինն այրմարդոց, Ոչ այրմարդն է ստրուկը կնոջ* (ն.տ.): *Ու չեք ծունկի զալիս անզամ՝ Անզամ առջև հայոց զահի* (51): Բայց քորմերը թոնդրադանդի կանգնած էին համբ ու կանգուն (48) և այլն: Հնդոծին են բոլորն ասես (101) համեմատությունը կաթողիկոսի խոսքում նպատակ ունի հասարակական ցածր կարգավիճակ և անհայր՝ ծագումնաբանությամբ չտարրուշված անձ նշելու՝ կապված թոնդրակեցիների ազատ կենցաղավարության հետ:

Ծիրազը կերտել է պատմաբառերով կայուն կապակցություններ, որոնք հիմնականում գործում են կերպարների խոսքում. տվյալ պարագայում գործող անձի խոսքն առկայանում է իր կացութաձևի անվանումների միջոցով: Պատահական չէ, որ դրանք նշված դարաշրջանի համագործածական բառեր են, և դրանց այլաբերացումը սովորական խոստական գործնաթաց է եղել: Ըննվող պոեմում նկատենի են՝ սուր, նետ, նիզակ, դաշույն, թուր, տեղ բառերով կապակցություններ, որոնցով մտավոր կամ ֆիզիկական գործունեության ազդեցությունն է ընդգծվում: Հատկանշական է, որ պոեմում ռազմի տեսարաններ չկան, և Ծիրազը զենքների անուններն ավելի շատ պատկերավոր արտահայտություններում է գործածել: Եզակի է նշվածների անվանողական դերը, օրինակ՝ -ԹՇ ստեմ, արրա, -ՀՀՆՉԱԳ մեկը, -ԹՇ կործքս խրվի քո արդար տեղը (123): Ծիրազը յուրովի զեղարվեստականացրել է պատմական մտածելակերպը, օրինակ՝ սպարապետի հրամանի՝ ազդեցություն չգործելը այլաբերվել է Վրիպեց նետը (162) կամ՝ նրա կաթողիկոսը հանդիմանում է նրան՝ Լոռ մ ես, ինչպես սուրդ պատյանում (159): Այսպես են նաև՝ սև մեղաց սև սուրդ պատյանել (78), լեզուն ասես թուր է դահճի, ազգի նիզակ (136), Աչքերիդ սուրդ պատյանում պահիր, Ինձ տեր կոչելով՝ քեզ մի գրահիր (52): Խշանաց առաջ Այս զինաշառաջ, Որոնց աչքերու լուրջունն անզամ Քեզ՝ մահավճռի թուր է անպատյան: ԹՇ՝ թաքուն թուր եք՝ իմ խաչի առաջ (77): Մյուս քաջերն՝ իր աղանդի նիզակ մոնթերն անշեղ Զորավարներն իր փաղանգի՝ նորամորուս ու նորագեղ, Իբրև նետեր՝ իր աղեղին (41): Պարզեց խաչը թրի նման (41): Բոլոր ցեղերն, ասում եք, մեկ են, Ել ինչով են մեկ, եղք թուր ու տեղ են, նիզակ ու նետ են՝ մեր ճեղքից խլված Մեծն Մասիսի հայ կործքը խրված (72): Անբանակ բներդ է մարմինն անհոգի (283): Մտրի ու լեզվական միավորների համադրման արդյունքում թրաբեզու (68), սուսերալեզու (159) բառերը ևս ընդգծված են ներկայացնում խոսքի ազդեցությունը: Նշվածների բացառումն ընդգծում է հակառակը, օրինակ՝ անթուր խոսել (134)՝ մեղմ, առանց սպառնալիքների արտահայտվել: Հեղինակի զեղարվեստական դիտարկումը նիզակացցվել հեղինակային բառով արտացոլում է նրա ստեղծագործական ազատության չափը. Եվ թոնդրակեցոց խումբն էլ հայտնվեց՝ Նիզակացցվեց ատյանի առաջ (268):

Անհատական ոճավորման երևոյթ է նաև համատեքստում պատմաբառերի նշված նրկու՝ անվանողական և զեղագիտական գործառույթների համատեղումը: Ընդհանրապես, նմանությամբ կազմվող ծների ոճական կիրառությունները հատուկ են մեր լեզվին: Հովի. Ծիրազը դրանք հասցըն է նոր զեղագիտական մակարդակի: Նոյնահիմքության միևնույն հիմքից կամ արմատից կազմված բառերի արվեստավոր գործածության բնությամբ զբաղվել է Պ. Պողոսյանը<sup>1</sup>: Այդպիսի ոճաձև է առաջացնել հետևյալ օրինակներում. Յուլի նման ծունկի չի զալիս Արքային առաջի նման Այս սատանաշյա ստրուկն էլ, սակայն (49): Կամ՝ ԹՇ՝ ճորտացավ խաչն իմ ճորտին (ն.տ.):

Պատմական ժամանակաշրջանի տիպականակազմանն են ծառայում նաև այնպիսի բառային միջավայրերի ստեղծումը, որոնցով վեր է հանվում պատմական մտածողություն, օրինակ՝ Ու մոայլվեց արքան անչափ, Որ փոշու պես ուրը չընկան (48):

Գեղարվեստական հնարք է նաև պատմաբառերից կամ հնարանից հեղինակային միավորների սերումը. քննվող պոեմում զերակշռում են թոնդր(ակ)- իմքով կազմությունները: Կան և չեզոք, և բացասական նրանքավորումներով բառեր՝ թոնդրակազտ, թոնդրադանդ, թոնդրաքողոր, թոնդրակամեծ, թոնդրակուիի, թոնդրահամբոյր, թոնդրահայ, թոնդրանետ, թոնդրատզի, թոնդրատիմակ, թոնդրատրծ, թոնդրապջալ, թոնդրավագր, թոնդրաքառու, և այլ՝ բառնի համար հեղինակային կազմություններ, որոնցով ևս ցայտուն դրսորդում է Ծիրազի անսպատ երևակայության ու հմուտ բառագործածության հարաբերակցությունը: Հանճարեն գրողը կարողացել է բառային այնպիսի միջավայր ստեղծել, որ իրարամերժ իրողություններ արտահայտող բաղադրիչները համադրվեն մեկ բառում և ցայտուն արտահայտեն պաշտոնական նկեղեցու բացասական վերաբերմունքն աղանդի նկատմամբ: Արդյունքում ստեղծվել է արտակադապարային՝ թոնդրադանդ (77) բառը, որ նշանակում է Սմբատ Զարեհավանցու հայացքների ամբողջությունը՝

<sup>1</sup> Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ.2 ,Եր., 1991, էջ 155:

<sup>2</sup> Էլոյսան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճագիտություն, Եր., 1989, 199:

քրիստոնեական պրիզմայի ներքո: Այսպիս է նաև գաղտնաբյուզանդ (54), որի բառակազմական հիմքնը բացասական երանգ ունեն ինքնին:

Պատմական ժամանակաշրջանի խոսքային միջավայր են կերտում հնաբառերը: Իբրև երկլստությունների հիմքի վրա կառուցված երկ՝ «Թոնդրակնեցիներ» առատ է գրաբարյան և միջին հայերենան լեզվական իրողություններով: Հնաբառերը խոսքիմասային տարբեր միավորներ են՝ զի (269), պղծանք (267): Քերականական ձևերի առատությունը ևս զգալի է, այստեղ Շիրազը մնացել է ժամի ավանդական սահմաններում: Կան զոյականի, դերանվան բառաձևեր՝ այլոց (267), կամորն (268), հազարաց (267), օրինաց (269) և այլն: Դրանց կիրառության սխնման դասական է, բառերն ու բառաձևերը կնրպարների խոսքը տիպականացնող միջոցներ են: Առանձնանում են հոլովածները, անցյալ դերայի անկալս գործածությունն առանձին կաթողիկոսի խոսքում:

Պատմական ժամանակաշրջանի զնիարվեստականացումը Շիրազն իրացրել է մեծագույն արվեստով: Պատկերավորման տարբեր միջոցների չափավոր կիրառությամբ վեր է հանել պատմական ևս մեկ բարդ ժամանակաշրջան: Օրինակ՝ պատմական լինդիրներ են արտացոլված նաև արքային վերաբերող շրջատույթներում՝ փորրացված երկրի մեծ մոյորյալ (89), փորրազորք երկրի մեծ տագնապալ (114): *Մեծ-փորք* հաւաքարույթին առավել է ընդգծում ստեղծված ազգակործան իրավիճակը: Անթարույց բացասականություն կա Բյուզանդիա, թաթար, թուրք, արար հասկացությունների նկատմամբ: Առաջինն իբրև հունացնող գիշատիչ սպառնալիք՝ *Տենչում* է ծովող իր ծոցը քաշել, քաշել՝ դարձնել նաև գերին թրի, -Ապա դարձնել գերին իր զրի, - դարձնել սորուկն ու դանդաղ ծովիլ (112): Բյուզանդիան բնութագրվել է իբրև սուս խաչեղբայր, մույթ քրիստոնյա (161): Արտարին թշնամիներից փանզի ընդհանրացված պատկերներն են ստեղծում՝ թաթարն ամպել է հայ երկրի վրա (54), օտարն է իմ երկրում ամրոցվել (54), մայր Արարսի ջրերն էլ խմում են արար նժոյգները (53) և այլն: Շիրազն ընդհանրապես հայ ժողովրդի պատմական ծանր վիճակը ներկայացրել է բանաձևային արտահայտությամբ՝ յոթն ազգերի ծանկն ընկած ազգ (145):

Սովորաբար յուրաքանչյուր պատմական երկի ժամանակաշրջանն ինչ-որ կերպ հարաբերվում է գրողի ժամանակաշրջանին, և դա չի արտացոլվում երկի բառապաշտությում, մնում է զաղափարական ոլորտում: Շիրազը խախտել է ավանդականության սահմանները: Նրա գաղափարները պատկերային մակարդակից անցել են բառային միջավայր, օրինակ՝ *Մասիս, լոլել, գերություն* բառերը շարականական որոշակի միջավայրում, *Վանա դուռը թացել, հողն այնտեղ է, Արագն այն կողմ,* *Ողջը խլեց թուրքն անողորս* (91) և այլ արտահայտությունները: Շիրազի նման հմուտ ստեղծագործողը, սակայն, այսպիսի միջարկումներն այնքան արվեստորեն է կատարել, որ դրանք ժամանակավիպության ոճական թերությունը մասամբ են կրում: Նման նախադասություններն ու արտահայտություններն այն հատվածներում են, որոնք ազգային, տնտեսական խնդիրների խտացվածք են ներկայացնում, և մտքի ու բառերի դինամիկ զարգացման մեջ ներկայություն են տարբեր ժամանակաշրջանների խնդիրները, որոնք ընդհանրական են պատմական վիճակի և դրա արդյունքի առումով, օրինակ՝ *Ի՞նչ կուսանց, երբ մայր կուզեն հայոց՝ գերի սարերն անզեն...կուսանցներն հայոց անձին՝ Զուր են թուրքաց ջրաղացին* (67): *Հայ վանքեր մզկիթող թուրք* (160), *Գերության մեջ է Մասիս իմ հայկան* (41), *Ի՞նչ վեճի դար է, երբ հուսուն է գոցվել, Երբ օտարն իմ իսկ երկրում ամրոցվել, Երբ թուրքը խել ծովն էլ իմ վանա, Տենչում է խմել ծովն էլ Ալանա* (54): Նշված ասույթները դարերի պատմության վերջնարդյունն են՝ տեղափոխված IX դարի տիրույթ: Վերջին արտահայտությունը համեմատության բաղադրիչ է՝ *Կանզնած մնացին, ինչպես իր զահով՝ Գերության մեջ է Մասիս իմ հայկան* (41): Կամ՝ նոյն պատմական դարաշրջանում *Մասիսը կարող է խորհրդանշի լինել միայն շիրազյան պատմական կերպարների համար՝ Շուր ուրիշ մուր եր Մասիսի ճյուղին* (77), *Հայ եմ, Մասիս հայ է ծնում* (60) և այլն: Թուրք, ենիշար բառերի բազմաթիվ գործածությունները (Եզնը 54, 67, 91, 155, 156, 160 և այլն) ժամանակավիպության արտահայտություններ են, սակայն ամեն դեպքում հեղինակը դիմել է **միտումնապնդ ժողովության**<sup>1</sup>: Ծայրահեղության է հասցված կնոջը հակադրվող բացասական նզրերում սելջուկ, ենիշար բառերի գործածությունը՝ (*Ազատությունը*) *Սելջուկին տվեք, ժանտ ենիշարին, բայց ոչ կնոջը* (203): Պոնմում թե արքայի, թե սպարապետի, թե ի վերջո կաթողիկոսի մտքի զարգացումը հանգեցնում է հայրենիքի ազատագրման զաղափարին, նրանց խոսքը երբեմն պաթետիկ է, վեր է հանվում պատմական երազանքը՝ միահյուսված արդիական երանգներով՝ կանոնեմ, արքա, կցունեմ ելլը, Զանզերս պիտի խնկեն քո խելլը, Եվ պիտի կուրեն այս ծով-ծարավի Քո դեմ խոյացող կուտահարավը: Քո յոթ գետերով՝ երկրով Նախյան, Քո մայր Արաքսով մյուտոնաբուրյան, Քո Եփրատ, Շիզիս, Ճորդիս գետերով, Քեզ կտան հողոյ՝ քո զորք նետերով (245):

<sup>1</sup> Խլդարյան Ֆ., Ոճաբանական բառարան, Եր., 2000, էջ 64:

Այսպիսով՝ պատմական ոճավորման շիրազյան համակարգն այնքան յուրատիպ է, որ ԽՀԴ. հայ գնդարվեստում ներկայանում է իրեն առանձին համակարգ՝ արժանի համակողմանի ուսումնասիրության :

#### Օգտագործված գրականություն

1. Արգումանյան Ս., Սովորակայ վեպը, հ.3 , Եր., 1986:
2. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճագիտություն, Եր., 1989:
3. Խոհարարյան Ֆ., Ոճաբանական բառարան, Եր., 2000:
4. Շիրազ, Թոնդրակենցիները, Ել., 2014:
5. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ.2 , Եր., 1991:
6. Սարինյան Ս., Հայոց գրականության նրկու դարը, Եր., 2004:

**Տեղեկություններ հեղինակի մասին.**

Ըուշանիկ Սահյան-ք.ք.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն  
E-mail: shushaniksagyan@mail.ru

**Հոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կողեզրայի անդամ, ք.ք.դ., Ս.Խանյանը:**